ՄԱՆԿԱՆ ՀԱԳՈՒՍՏԸ ՇԻՐԱԿԻ ԵՎ ՋԱՎԱԽՔԻ ՊԱՏՄԱԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐՈՒՄ (XIX դ. վերջ—XX դ. սկիզբ)

Ս. Հ. ՊՈՂՈՍՅԱՆ

Ինչպես անցյալում, ներկայումս էլ ավանդութային տարազի ուսումնասիրությամբ զբաղվող մասնագետների ուշադրության կենտրոնում են տղամարդու և կնոջ տարազի համալիրները, մինչդեռ մանկան հագուստը մնացել է ստվերում, թեև այն կազմում է ինքնատիպ մի խումբ, որի ազգագրական ուսումնասիրությունը առավել ամբողջական կդարձներ տարազի զարգացման պատկերը։ Մանկան հագուստը դիտվել և այժմ էլ դիտվում է որպես մեծահասակների հագուստի սոսկ կրկնություն և նմանակում, այդ պատճառով էլ հանդամանալի դիտարկման չի ենթարկվել։

Ազգագրական նյութերը թույլ են տալիս գալ այն եզրակացության, որ մանկան հանդերձանքը բնավ էլ մեծահասակների համապատասխան սեռատարիքային խմբի մեխանիկական կրկնությունը, պատճենը չէ։ Երեխայի կյանքի առանձին փուլերին համապատասխան նրա հագուստում դրսևորվել են տարիքային որոշակի առանձնահատկություններ։ Առաջին փուլում նորածնի հանդերձանքը սեռատարիքային արտահայտված տարբերություններ չի ենթադրել։ Մինդյան առաջին իսկ օրից նորածնին ձիդ ու ամուր փաթաթել են բարուրաշորերով ու խանձարուրով։ Վերջինս, ըստ Վ. Հացունու, «...երկար երեզ մը, որ դառնալով կըպրկեր ամբողջ մարմինն՝ ըստ ընդհանուր սովորության»[1]։ Անցյալում նորածնի «օժիտը» կանխավ չի պատրաստվել, հավանաբար, երկնչել են դրանով անհաջողություն և փորձանք առաջ բերելուց։ Սակայն արդեն ներկա դարի սկզբներին նկատվում է այս սահմանափակումը շրջանցելու միտում՝ առաջին հերթին, իհարկե, հարուստ խավերում։

Մանկան կյանքի առաջին փուլում հանդերձանք բարուր-բալուլը, որը կազմված էր որոշակի ձևի կտորներից (քառանկյունաձև, երկծալ կամ եռանկյունաձև ձևվածքով պող-բողից, հողշորից, հողլաթից, գլխի համար նախատեսված գլխաշոր-յափուղ-յաղմայից, երկարավուն ուղղանկյան տեսքով թևլաթից), առանձնանում էր ձևվածքի ու կառուցվածքի պարզությամբ[2]։ Անցյալ դարի վերջերին պատմական Շիրակում և Ջավախքում, ինչպես նաև Հայաստանի պատմաազգագրական մյուս շրջաններում մանկան հագուստը գերազանցապես կարել են գործածված զգեստների կտորներից, որն, անշուշտ, առաջին հերթին ունեցել է կիրառական նշանակություն և միանգամայն բնական բացատրություն. այն փափուկ է ու հարմար նորածնի նուրբ ու զգայուն մաշկի համար, մյուս կողմից՝ մատչելի է և ավելորդ ծախսեր չպահանջող։ Այս սովորության հիմքում նկատելի է նաև հնամենի պատկերացումների հեռավոր արձագանքը՝ հաղորդակցվելու, առնչվելու միջոցով (տվյալ դեպքում զգեստը կրելով) ստանալ նախնիների հովանավորությունը, ժառանգել նրանց ուժն ու կորովը։

Մանկան տակաշորերը, ավանդույթի համաձայն, չեն նետել, և այն մասին, որ դա չուներ սոսկ գործնական, կիրառական դեր, վկայում է հետևյալ ասույթը. «Հին հողլաթ տան դովլաթ»[3] (հաջողություն ապահովող)։

---

1 Վ. Հացունի, Դաստիարակությունը հին հայոց քով, Վենետիկ, 1923, էջ 18։

2 Ս. Պողոսյան, Դաշտային ազգագրական նյութեր, Շիրակ-Ջավախք, 1982—1988 (Հնագիտության և ազգագրության ինստիտուտի ազգագրության բաժնի արխիվ)։

3 Հ. Գեղամյանց, Իմ մանկական հիշողությունները (Փորձ, 1877—1878, թիվ 2, էջ 289)։

Նորածնի հանդերձանքում, նրան խնամելու սովորույթների համակարգում նկատելի է բնական ցանկություն ու հատուկ միտում՝ նպաստել երեխայի, վերջին հաշվով, սերնդի առողջ զարգացմանը։ Անցյալում ժողովուրդը իր պարզ, բայց հարյուրամյակների ընթացքում մշակված ու հղկված կենսակարգով ձեռք էր բերել ավանդական հմտություններ և այս ասպարեզում։ Շիրակում և Ջավախքում նորածին (մոր մարմնի ջերմությունից զրկված) երեխային անհրաժեշտ ջերմություն ապահովելու նպատակով նրա . . տակ դնում էին կանխավ տաքացրած անմշակ (խամ), մաղած, փափուկ հող, որը թոնրի վրա կավե ամանի մեջ բովելուց հետո, հողշորի մեջ լցնելով և վրան փռելով հոլլաթ, երեխային դնում էին վրան։ Ժողովուրդը համոզված էր, որ դրանով նորածինը զերծ էր մնում աղեստամոքսային և այլ հիվանդություններից։ Մինչև քառասուն օրը երեխայի դեմքը, գլխավորապես աչքերը ծածկում էին շորով (ճլլաթով), լույսի ուժեղ ազդեցությունից զերծ պահելու նպատակով՝ պատճառաբանելով, որ այն վատ է անդրադառնում մանկան «աչքի լույսին»՝ տեսողությանը։ Ցանկանալով ապահովել մանկան մարմնի բարեկազմ, առողջ զարգացումը՝ երեխայի ոտքերն ու ձեռքերը ամուր և ուղղաձիգ կապում էին իրանին։ Ի դեպ, աղջիկ երեխաներին նստել սովորեցնում են ավելի վաղ, ցանկանալով իրանի կոնքամասին տալ լայն ուրվագիծ, որը գեղեցկության տեղական ընկալման ինքնատիպ դրսևորում էր։

Ծնվելուց մի քանի օր անց նորածնին հագցնում էին պարզագույն ձևվածքի շապիկ՝ բամբակյա կտորից, որն էլ հենց իր պարզության մեջ էր կատարյալ ու հարմարավետ (կարերն արվում էին խնամքով ու նրբությամբ, ձեռքով, ամրակ-կոճակ չէր գործածվում՝ մանկան մաշկը չվնասելու մտավախությամբ)։ Երեխայի շապիկը առաջին անգամ հագցնում էին մկրտության ծեսին, որ «կանոնական ժամանակը ութօրյա է»[4]։ [illegible], թե ինչպես է նկարագրված հետօծման և նորածնի հանդերձակազմի արարողությունը Երուսաղեմի Ձեռագրատան 289 մատյանում (մկրտության կանոն)։ Քահանան, երեք անգամ խաչակնքելով երեխային, որոշակի բարեմաղթանքից հետո կնքահոր հետ այրում է հին շորերը և նորը հագցնելով ասում. «Հագցրու սրան հանդերձ փրկության և ուրախության պատմուճան», հետո գլխին դնում են կնգուղը՝ ասելով. «Դիր, Տէր, սաղաւարտ փրկութեան պսակ շնորհաց սրա գլխին», ապա կապում կարմիր-սպիտակ թելերից նարոտ։ Վերջում ծածկում են սպիտակ հանդերձով[5]։ Նորակնունք երեխային, այսպիսով, հագցնում էին նոր սպիտակ հանդերձներ և առաջին հերթին՝ շապիկ։ Կարծում ենք, պատահական չէ, որ չափահասներին ևս հագցնում էին երկար շապիկ։

Շիրակում և Ջավախքում մանկան շապիկը կարում էին բամբակյա կտորներից, տնային պայմաններում։ Անցյալում շապիկը ասեղնագործվում էր ոչ միայն գեղազարդական նկատառումներով, այլ գլխավորապես չար ուժերի վնասաբեր ազդեցությունից զերծ պահելու նպատակով։ Ժամանակի ընթացքում մոռացվում է ասեղնագործ բանվածքների, զարդանախշերի բուն իմաստը, և շապիկը ասեղնագործվում էր սոսկ ավանդույթի ուժով, առանց խորամուխ լինելու դրա էության, խորհուրդների մեջ։ Չարխափան նպատակներով շապիկին կարում էին հմայիլ-պահպանակներ, բազկին կամ գլխարկին ամրացնում աչք-ուլունքներ՝ քաջ գիտակցելով դրանց դերը[6]։

Մանկան խանձարուրը, այն կապելու եղանակներն ու հմտությունները, կապված որոշակի բնակլիմայական, պատմական, սոցիալական միջավայրի հետ, տարբեր էթնիկ ընդհանրություններում, որոշ նմանություններով հանդերձ, ունեն էական տարբերություններ։

---

[4] Դ ե ր ե ն ի կ ե պ ի ս կ ո պ ո ս, Մկրտություն և դրոշմ (կնունք), Էջմիածին, 1988, էջ 9։

[5] Նույն տեղում, էջ 27—28։

[6] Վ. Բ դ ո յ ա ն, Երկրագործական մշակույթի մի քանի հարցեր հայոց մեջ (Աշխատություններ Հայաստանի պատմության պետական թանգարանի, Երևան, 1951, էջ 78)։

Մանկան խանձարուրը իր տիպով (փաթաթված, ավարտուն վիճակում) ուշագրավ զուգահեռներ է դրսևորում թաղման գլխավոր հանդերձանքի՝ պատանի հետ։ Այդ նմանությունը ակնհայտ է հայկական միջնադարյան մանրանկարներում արված ծննդյան և թաղման պատկերներում[7]։ Մեր կարծիքով, դա պատահական չէ, այլ ունեցել է որոշակի խորհուրդ։ Այսպես, 1) իմաստային ստուգաբանությամբ խանձարուր, բարուր (բալուլ) բառերը նշանակում են նորածնին փաթաթելու շորեր, որոշակի ձև ունեցող կտորների ամբողջություն, 2) ընդհանրապես փաթույթ, 3) մահիճ, մահվան խանձարուր, 4) փխբ. ծնունդ, պատան(ք) բառերը ևս ստուգաբանվում են որպես փաթաթան[8]։ Այստեղ իմաստային ուշագրավ փոխներթափանցում գոյություն ունի։ Բացի այդ, պատանի և խանձարուրի գույները ըստ ազգագրական, բանահյուսական նյութերի ևս համընկնում են. դրանք, որպես կանոն, սպիտակ գույնի են եղել (մանրանկարներում դրանց գույների չհամընկնելը ունի զուտ կոմպոզիցիոն, գունային ինքնատիպ լուծման մեկնաբանություն), իսկ մեզ հայտնի է, թե վաղ անցյալում շատ էթնիկ ընդհանրություններ գունային համակարգին ինչպիսի ծիսական իմաստ են վերագրել[9]։ Մյուս կողմից՝ թաղման և ծննդյան հանդերձները, ըստ տիպաբանական բնութագրի, դասվում են այսպես կոչված անկար հանդերձների շարքը, որոնք «փաթաթվել են իրանի շուրջը և որոնք դիտվում են իբրև վաղնջագույն ժամանակների հագուստի օրինակներ»[10]։

Ծննդյան և թաղման հանդերձների նմանությունը գուցե բացահայտվում է նաև նրանով, որ գոյություն ունի ծննդյան և մահվան անխզելի կապ, և դա երկու բևեռների հարատև հակադրվածության և միասնության գաղափարի դրսևորումներից է։ Գուցե դա այն հնամենի մտայնության (նախաքրիստոնեական) արգասիքն է, ըստ որի, մահը վերադարձ է մայր երկրի արգանդ, իսկ մարդը նույն կերպ է դիմավորում (ծնվելիս) և հրաժեշտ տալիս (մեռնելիս) անցավոր կյանքին։ Ի վերջո՝ ծննդյան և թաղման հանդերձները կիրառման մեջ է դրել որոշակի կենսափորձով, հնամենի սովորութային համակարգով առաջնորդվող մարդկանց խումբը, որը, գործելով դարերի ընթացքում մշակված սովորութաավանդութային համակարգի շրջանակներում, որոշակի ծիսականություն է հաղորդել դրանց։

Ներկայումս բժշկական, մանկաբարձական գրականության էջերում ընդգծվում է այն միտքը, որ սխալ, նույնիսկ վնասակար է երեխաներին բարուրաշորով ամուր փաթաթելը. ծննդյան օրից երկու ամիս, նույնիսկ երկու շաբաթ անց արդեն դրանք պետք է հանել։ Պատճառաբանվում է, որ ամուր փաթաթված երեխան չի կարող ազատ շարժվել, որը վատ է անդրադառնում մանկան թույլ զարգացած մկանային համակարգի վրա[11]։ Սակայն այսօր էլ հայ գյուղական միջավայրում շարունակում են ձիգ, ամուր կապել նորածնին՝ ակնկալելով նրա օրգանիզմի առողջ աճն ու զարգացումը։ Միմիայն ուսումնասիրողների համատեղ ջանքերով ու փորձերով կարելի կլինի գտնել երեխայի ֆիզիկական, հոգևոր ներդաշնակ ու կատարյալ զարգացման համար

7 Հին հայկական մանրանկարչություն, Երևան, 1952, Է. Հակոբյան, Հայկական մանրանկարչություն. Վասպուրական, Երևան, 1978, նկ. № 3, 10, 11, 13, 19, 28, 31, 38, 40, 67։

8 Բարուրաշոր-բարուրել՝ նորածին երեխային բարուրի շորերի մեջ փաթաթելու խանձարուրել (տե՛ս Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հ. 1, Երևան, 1969, էջ 304), խանձարուր-մանկիկի բալուլ-խանձարուր՝ փաթաթել արմատից (նույն տեղում, հ. 2, Երևան, 1972, էջ 481)։

9 Ю. Липс, Происхождение вещей, М., 1954, с. 117; Н. И. Гаген-Торн, Женская одежда народов Поволжья, Чебоксары, 1960, с. 204—206; В. Тэрнер, Символ и ритуал, М., 1983, с. 8.

10 О. А. Сухарева, Опыт анализа покроев традиционной «туникообразной» среднеазиатской одежды в плане их истории и эволюции (Костюм народов Средней Азии, М., 1979, с. 99).

11 Մ. Մատոուշեկ, Երեխայի կյանքի առաջին տարին, Երևան, 1989, էջ 66—74։

անհրաժեշտ լավագույն եղանակներն ու պայմանները։ Համենայն դեպս, անթույլատրելի է ազգային սովորություններից բխող առանձնահատկությունների, ժողովրդական կենսափորձի անգիտակից, միանշանակ անտեսումը, չէ՞որ ազգային խառնվածքի, կերպարի ձևավորման կարևոր գործոնների շարքում որոշ դեր ունի նաև մանկան դաստիարակությունը («կրթությունը օրոբոցեն կը սկսի»[12])։ Անիմաստ չեն նաև մանկանը հանդերձավորելու եղանակները[13]։

Մանկան հագուստը որոշակիորեն կրել և կրում է մեծահասակների տարիքային խմբի գեղագիտական ճաշակի, ընտրության. ձգտումների ազդեցությունը, իսկ այդ հանգամանքը ապահովում է ինչպես հագուստի ավանդութայնությունը, այնպես էլ նորի նկատմամբ որոշակի հակվածությունն ու ընկալունակությունը։

Մանկան հագուստի առաջին իսկ տարրերում դրսևորվում են սոցիալական տարբերություններ։ Դրանք արտահայտվում են ունևոր խավերում մանկան օժիտի նախապես պատրաստմամբ, դրա կտորների տեսականու ընտրությամբ, թվակազմի հարստությամբ։ Սակայն այս տարբերությունները որոշակի պայմաններում հետին պլան են մղվում՝ ոչ-ավանդական սոցիալական խրախվիճակից։ Այն ընտանիքներում, որտեղ երկար ժամանակ նորածինները, առանձնապես տղաները, մահանում են, մայրը նոր ծնված երեխայի համար շապիկի կտորներ է խնդրում, որպես կանոն, յոթ ընտանիքներից և դրանցից կարում երեխայի շապիկը։ Այդ սովորույթը դիտարկվող շրջանի որոշ վայրերում հայտնի է «մատաղանա» (զոհաբերություն) անունով։ Հաճախ էլ տղաների մազերը մինչև յոթ տարեկան չեն խուզում, աղջկա շորեր են հագցնում՝ չար ուժերին շփոթեցնելու, հետ վանելու, նրանց վնասաբեր ազդեցությունը չեզոքացնելու նպատակով[14]։ Ջավախքում, երբ երեխան վատառողջ էր, գողանում էին մի առողջ երեխայի շորերը և բարուրում նրան, կարծելով թե այդ միջոցով երեխան կառողջանա։ Հաճախ էլ, այս կամ այն հիվանդությունից ձերբազատվելու միտումով, հիվանդ երեխայի շապիկը (նույնը և մեծահասակների հիվանդության դեպքում) տարել և թողել են սուրբ ծառի, խաչի կամ պաշտամունքային որևէ այլ օբյեկտի մոտ[15]։

6—7 ամսականից արդեն երեխային ազատել են բարուրաշորերից։ Հայաստանում կատարված դիտարկումներից, բժշկական ուսումնասիրություններից պարզ է դարձել, որ երեխայի կյանքի համար վտանգավոր է համարվում և մահացության բարձր տոկոս է դիտվում յոթ օրից մինչև 6 ամսական շրջանում[16]։ Գուցե հենց այստեղ է, որ զգացվում է ժողովրդական փորձի և հմտությունների կիրառման պակասը։

Մանկան կյանքի հաջորդ փուլում նրա հագուստի կառուցվածքը համալրվում է նոր տարրերով. 6—7 ամսականից արդեն շապիկի հետ միասին հագցրել են և առանց ձագի վարտիքը, որն ավելորդ է դարձնում մանկան շորը հաճախակի փոխելու անհրաժեշտությունը։ Սա ժողովրդական հմտու-

---

12 Վ. Հացունի, նշվ. աշխ., էջ 9։

13 Маргаред Мид, Культура и мир детства. М., 1988, с. 217—225.

14 Ի դեպ, նման սովորույթ դիտվել է և միջինասիական հրեաների մեջ (այդ մասին տե՛ս А. Аминик-Шапиро, Верования и обряды среднеазиатских евреев, связанные с материнством и ранним детством (Советская этнография, 1933, № 3—4, с. 163):

15 Ե. Լալայան, Ջավախք (Ազգագրական հանդես, դ. Ա, էջ 279)։ Վրաստանի պետ. թանգարանի ազգագրության ֆոնդում պահվում են տղա երեխայի շապիկ՝ սպիտակ կտավից, առջևամասը հարդարված բազմագույն մետաքսյա թելերով (№ 33—16) և գդակ (№ 33—16(2)՝ մանուշակագույն մետաքսից՝ զարդարված գրամներով, կոճակներով, ուլունքներով, հմայիլներով, չար աչքից պաշտպանելու համար։ Գլխարկի վրայի արծաթյա գորտը և կիսալուսինը լուսնային հիվանդություններից պաշտպանելու համար են։

16 Զ. Գևորգյան, Մանկական մահացության հիմնական պատճառները և նվազեցման ուղիները (Առողջապահություն, 1987, № 5, էջ 14)։

թյան մի ուսանելի արտահայտություն է, որը հաջողությամբ կարելի է կիրառել մեր օրերում։

Մանկան կյանքի հաջորդ փուլում իրենց զգացնել են տալիս որոշ սեռային տարբերակումներ և սահմանափակումներ։ Աղջիկներին 2—3 տարեկանից հագցրել են երկարափեշ զգեստ, ծագով վարտիք, տղաներին՝ առանց ծագի վարտիք ու երկար շապիկ։ Երկու դեպքում էլ գործածում էին հյուսածո կամ կտորե գոտիներ։

Դիտարկվող շրջաններում աղջիկների հիմնական հագուստը բամբակե կամ մետաքսե զգեստն էր։ Ի դեպ, աղջկական հագուստի հնամենի օրինակը թվագրվում է XIII դարով և գտնվել է Անիի պեղումների ժամանակ՝ Հոնենց Տիգրանի փոքրիկ բարեկամուհու դամբարանից։ Զգեստը հարդարված է կարմիր թելի շարակարերով։ Գոտին մետաքսյա վարդաձև ժապավեն է, համարեցված ներսի կողմից և չի կապվել։ Դա, ըստ Հ. Օրբելու, ունեցել է խորհրդանշային իմաստ[17]։

Համաձայն Բ. Առաքելյանի նկարագրի, Ծաղկոցաձորի ննջեցյալ աղջկա «գլխին կապված է եղել սև գույնի մետաքսե և նուրբ շղարշ...»[18]։ Սակայն, հենվելով ազգագրական նյութերի վրա, ենթադրում ենք, որ այն ոչ թե կապված է եղել գլխին, այլ դրանով ծածկել են դեմքը։ Նախ, այն պատճառով, որ աղջիկների գլխի հարդարանքը շատ պարզ է եղել, մյուս կողմից, դա երևում է Բ. Առաքելյանի հետևյալ տողերից. «Շղարշը փտել է և նրա մի մասը պահպանվել է կպած դագաղի փայտին»[19]։

Ըստ դաշտային ազգագրական նյութերի, աղջիկների գլխի հարդարանքը պարզ էր և կազմված էր ընդամենը երկու կամ ավելի հյուսերին ամրացված ծամթելերից, հասարակ ուլունքներով զարդերից, իսկ տոն օրերին՝ ծաղկեպսակներից։

Գյուղական միջավայրում, կապված կյանքի ու կենցաղի առանձնահատուկ պայմանների հետ, երեխաները (առանձնապես տղա) հաճախ կիսամերկ էին լինում՝ մինչև 5—6 տարեկան։ Նրանք հիմնականում ոտաբոբիկ էին շրջում, ձմռանը հագնելով գույնզգույն թելերից հյուսած նախշուն գուլպաներ։ Ըստ որում, եթե դեռահաս աղջիկների գուլպաները մինչև ազդրերն էին հասնում և կապվում կապիչներով, ապա տղաներինը ավելի կարճ էին, մինչև ծունկը։ Ի դեպ, նման գուլպաներ և գործած կամ կաշվե ներբանով մաշիկներ էին հագցնում նոր-նոր քայլել սովորող երեխաներին. դրանց ճկունությունը նպաստում էր քայլելուն։ Որպես ոտնաման, աղջիկները հագնում էին դեղին մաս և կարմիր բաբուջ, իսկ պատանիները՝ տրեխ-չարուխ, տոն օրերին որոշ ընտանիքներում տղա երեխաներին հագցնում էին քաղաքում պատվիրված կաշվե ոտնաման՝ յամանի-էմենիներ։

7—8 տարեկան երեխաների հագուստը ուներ արտահայտված սեռատարիքային տարբերակում, և անտիճանաբար զգացվում էր՝ նրանց հագուստը մեծահասակների հանդերձանքին նմանակելու միտումը[20]։ Հայոց մեջ,

---

17 Հ. Օ ր բ ե լ ի, Անւոյ ավերակները, Վաղարշապատ, 1911, էջ 8—9։ Տե՛ս նաև Բ. Ա ռ ա ք ե լ յ ա ն, Քաղաքները և արհեստները Հայաստանում 9—13-րդ դարերում, Երևան, 1958, էջ 230։

18 Բ. Ա ռ ա ք ե լ յ ա ն, նշվ. աշխ., էջ 280։

19 Նույն տեղում, էջ 280։

20 Ս. Զելինսկու՝ Ալեքսանդրապոլի գավառի գյուղերից մեկում գրառած մի գյուղական ընտանիքի բյուջեի նկարագրում տրված է աղջիկների համար պատրաստվող հագուստների, ագանելիքի և գլխի հարդարանքի ցուցակը, ըստ որի աղջիկների համար հարկավոր էր բյազից մեկ երկարափեշ շապիկ, չիլայից՝ երկու վարտիք, չթից՝ կարճ արխալուղ (երկու տարվա համար), կապույտ բումազեից՝ երկար արխալուղ, մի զույգ ոտնաման, ֆես, կոտ, գլխաշորեր, զոգնոց և գոտի, մի զույգ գուլպա։ Աղջիկներից երկուսի համար նախատեսված էր նաև բամբակյա ներդիրով չթե արխալուղ [С. П. З е л и н с к и й, Экономический быт гос-

դեռ վաղ շրջանից, առանձնապես հարուստ ազնվականները հոգ էին տանում իրենց աղջկերանց արտաքին վայելչության» համար[21]:

Ջավախքում չարխափան նպատակներով աղջիկների ծամերին կամ ֆեսի վրա ամրացվում էր երկմաս եռանկյունաձև զարդ՝ կտորների պատառիկներից, կոճակներից, ուլունքներից, սադափի կտորներից կարված: Աղջիկների ֆեսի վրա ամրացվում էին սև թելափունջ, դրամներ, ուլունքներ ու հմայիլներ:

Դեռահասների հագուստը, ի տարբերություն երիտասարդ չամուսնացած հասուն համարվող աղջիկ-տղաների, նորահարսների ու նորափեսաների զգեստների, ավելի քիչ տարբեր է ընդգրկել՝ կապված գոյություն ունեցող սահմանափակումների, արգելքների հետ: Դրանք կրելու իրավունք էին ձեռք բերում միայն տարիքային ավելի բարձր կաս ամուսնական խմբի մեջ ներգրավվելիս: Այսպես, անցյալում, ամուսնանալիս, հաճախ հենց հարսանիքի առաջին օրից սկսում էին հագնել վերնազգեստի որոշ տարրեր (տղաները՝ չուխա, աղջիկները՝ գոգնոց և կապում էին արծաթյա գոտիներ): Սակայն այս սահմանափակումները աստիճանաբար տեղի էին տալիս և հարուստ խավերում XIX դ. վերջերից արդեն դրանք հեշտությամբ շրջանցվում էին: Անցյալում հագուստը սոցիալ-ընտանեկան ցուցիչի դեր էր կատարում և հեշտությամբ կարելի էր աղջկան կնոջից տարբերել, քանի որ կանայք կրում էին գլխի բարդ հարդարանք, իսկ աղջիկները շրջում էին առանց գլխաշորի, իսկ հասուն համարվողները՝ մի գլխաշորով:

Ըստ Պ. Բողատիրյովի[22], մանկան հագուստը չունի նորաձև հագուստի գործառույթ, սակայն համաձայն չենք այս կարծիքին, նկատի ունենալով դաշտային ազգագրական նյութերը և մանուկներին պատկանող լուսանկարային հավաքածուները, որտեղից պարզ երևում է, որ մանկան հագուստը (առանձնապես անցյալ դարի վերջերի) նորաձև է, փոխառնված եվրոպական ձևերից (կոստյում «մատրոսկա», կարճ վարտիք-շալվարներ և այլն), և դա այն ժամանակ, երբ նրանց ծնողները հագել են կա՛մ ավանդական, կա՛մ ավանդականից եվրոպականին անցումային ձևի հագուստներ: Իսկապես, անցյալ հարյուրամյակի վերջերին դիտարկվող մարզի քաղաքային միջավայրում (Ալեքսանդրապոլ, Ախալցխա, Ախալքալաք)՝ արագորեն, իսկ գյուղական ունևոր վերնախավի շրջանում՝ աստիճանաբար, եվրոպական մշակույթի և կենցաղի ազդեցությամբ, մանկան հագուստում շոշափելիորեն նկատվում են եվրոպականացման, միօրինակացման միտումներ[23]:

Այսպիսով, թեև մանկան հագուստը էթնիկական ցուցիչի դեր խաղալ չի կարող, այնուհանդերձ, դրա ազգագրական ուսումնասիրությունը օբյեկտիվորեն անհրաժեշտ է: Այն որոշակիորեն արտահայտում է սոցիալական, սեռատարիքային տարբերություններ, որոնք կարևոր են ժողովրդական տարազի համալիրի ղարգացման ամբողջական պատկերի վերականգնման համար: Մանկան տարազի դիտարկումը ունի ոչ միայն գիտական արժեք, որը յուրատեսակ բանալի է էթնիկական, սոցիալական երևույթների, առանձնապես հինավուրց սովորույթների ու հավատալիքների ծագման և զարգացման ուղու

ударственных крестьян в Шорагяло-Александропольском уезде Эриванской Губернии (Материалы экономического быта крестьян Закавказского края, Тифлис 1893, с. 75)]:

21 Վ. Հացունի, Հայուհին պատմության առջև, Վենետիկ, 1936, էջ 13:

22 П. Г. Богатырев, Функции национального костюма в Моравской Словакии (Вопросы теории народного костюма, М., 1971, с. 337—340).

23 «Տարազի» էջերում հանդիպում են հայտարարություններ այն մասին, որ քաղաքային խանութները ստացել են տղամարդկանց և երեխաների «վերջին մոդայի զգեստներ, գները մատչելի են», կամ էլ՝ «Ստացվել են ընտիր, ամեն ձևի՝ կանանց, տղամարդկանց և երեխաների համար Վիեննայի կոշիկներ»: Անշուշտ, այս բոլորը վերնախավի մենաշնորհն էր (տե՛ս Տարազ, Թիֆլիս, 1907, էջ 205, 224):

բայահայտման համար, այլև ունի զգալի կիրառական նշանակություն, քանզի հագուստի որոշ տարրեր, մանկանը հանդերձավորելու, խնամելու մի քանի ժողովրդական հմտություններ մեր օրերում էլ չեն կորցրել իրենց այժմեականությունը։

ДЕТСКАЯ ОДЕЖДА В ШИРАКСКОМ И ДЖАВАХКСКОМ ИСТОРИКО-ЭТНОГРАФИЧЕСКИХ РАЙОНАХ

(конец XIX-начало XX вв.)

С. Г. ПОГОСЯН

Резюме

Детская одежда, хоть и не является этническим индикатором, он она определенным образом выражает существенные социальные, половозрастные особенности. Детская одежда не есть механическое повторение соответствующей половозрастной группы взрослых (только в маленьких размерах).

На первом этапе жизни ребенка его одежда выделялась простотой покроя и структуры. Детские пеленки представляют собой интересные параллели с главным погребальным одеянием—с саваном.

Одежда подростков имела выразительную половозрастную специфику, и здесь чувствуется тенденция подражания костюму взрослых. Социально-имущественные различия в детской одежде переносились на второй план.

Уже с конца прошлого столетия под воздействием европейской культуры в детском одеянии четко наблюдались тенденции европеизации.